հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) նշված է 00882372, իսկ վճարման պահանջագրում որպես հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) նշված է 0088372:

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման թիվ 1 Հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետով մերժել է <<Պահապան>> ՍՊԸ-ի հայտը , հրավերի պահանջներին անհամապատասխան հայտի ապահովումը ներկայացնելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

6. Յուրաքնչյուր մասնակիցի առաջարկած գինը առանց ԱԱՀ

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի առաջարկ /առանց ԱԱՀ, ՀՀ դրամ / |
|---|---|---|
| 1 | <<Լեգիոն Ե.Ս.Է.>> ՍՊԸ | 19241666.66 |
| 2 | <<Սիլեր>> ՍՊԸ | 22188000 |
| 3 | <<Ար Մոբիլ>> ՓԲԸ | 23500000 |
| 4 | ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն | 36000000 |

<<Սիլեր>> ՍՊԸ –ի, <<Ար Մոբիլ>> ՓԲԸ-ի և ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն գնային առաջարկների հաշվարկում թվաբանական անճշտություններ չեն եղել:

<<Լեգիոն Ե.Ս.Է.>> ՍՊԸ –ի կողմից ծառայության համար առաջարկված ընդհանուր գնի մեջ եղել է անհամապատասխանություն թվերով՝ արտահայտվածի և տառերով գրվածի միջև: <<Լեգիոն Ե.Ս.Է.>> ՍՊԸ –ի գնային առաջարկի հաշվարկում այլ թվաբանական անճշտություններ չեն հայտնաբերվել; Հանձնաժողովը հիմք է ընդունել<<Լեգիոն Ե.Ս.Է.>> ՍՊԸ –ի տառերով գրված գնի առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

6.1. Հիմք ընդունելով մասնակիցների ներկայացրած գները, որոնք չեն գերազանցել այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը: Հանձնաժողովը նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքով, որոշել է ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

| | | Մասնակիցների զբաղեցրած տեղերը |
|---|---|---|
| 1 | <<Լեգիոն Ե.Ս.Է.>> ՍՊԸ | 1-ին տեղ զբաղեցնող մասնակից |
| 2 | <<Սիլեր>> ՍՊԸ | 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից |
| 3 | <<Ար Մոբիլ>> ՓԲԸ | գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը |
| 4 | ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն | գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

7. Հանձնաժողովը որոշել է հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

8. Հանձնաժողովը որոշել է գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հարցման մասին եզրակացությունը և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին կենդանաբանական այգու վարչական շենքում /ք.Երևան, Միասնիկյան 20/:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0: